



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yaralyan

**ՌԱԶՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ԳՐԱՖԻՏԻՆԵՐՈՒՄ**

Ռազմական համակարգը չի կարող գործառնել և իմաստ չունի առանց քաղաքացիական համակարգի: Այս երկու համակարգերի համագործակցության արդյունքում ռազմական մի շարք արժեքներ ներթափանցում են քաղաքացիական համակարգ և հակառակը: Ազգային, հայրենասիրական ոգին, հայրենիքի նկատմամբ պարտքի և պարտավորության զգացումը կարևոր բնութագրիչներ են, որոնք յուրաքանչյուր պետություն ցանկանում է սերմանել իր քաղաքացու մեջ: Հայաստանի դեպքում սա շատ կարևոր խնդիր է, քանի որ պետությունը գտնվում է «հարաբերական խաղաղության» պայմաններում՝ հավասարազոր «պատերազմի սպառնալիքին»: Ընդ որում, գաղափարախոսական համանման ձևերը կարող են ներթափանցել անգամ քաղաքացիական կյանքի այնպիսի ոլորտ, ինչպիսին փողոցային արվեստն է: Վերջին շրջանում հաճախ են հանդիպում գրաֆիտիներ, որոնք պարունակում են ռազմական խորհրդանիշներ և գաղափարախոսական տարրեր: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հայտնված նմանատիպ մի շարք գրաֆիտիներ թեպետ մեծ ալիք բարձրացրին հասարակության մեջ, բայց դեռևս չեն ուսումնասիրվել որպես սոցիալական ֆենոմեն:

Այսպիսով, արդիական է հասկանալ, թե ինչպես է այդ գրաֆիտիներում դրսևորվում ռազմականությունը, և ինչպես են կառուցակցվում այն իմաստները, որոնք ստեղծում են գաղափարախոսություններ և վարքի օրինակելի մոդելներ:

Սեն-Սիմոնը համարում էր, որ բանակը զարգացմանը խանգարող ամենաազդեցիկ երևույթն է: Սոցիալ-դարվինականության ներկայացուցիչները, որոնց առաջադրած սոցիոլոգիական համակարգում բռնի հակամարտությունը կարևոր դեր ունի, նույնպես հակված են եղել դրա նշանակությունը անցյալին վերագրելուն: Հ. Սպենսերը պնդում էր, որ բռնի պայքարի փոխարինումն արդյունաբերական մրցակցությամբ անխուսափելի է, ընդ որում, վերջինս ավելի արդյունավետ է: Իսկ Սամները կարծում էր, թե պատերազմի ամենակարևոր հետևանքներից մեկը տարածական ընդլայնումն է, որտեղ տիրում են խաղաղությունն ու կարգը: Նույնիսկ կոնֆլիկտի դպրոցի ծայրահեղ ներկայացուցիչները ինչ-որ առումով համակարծիք են այս տեսակետին: Ըստ Գումալովիչի՝ ռասսաների միջև մահացու ատելությունը, որը մի ժամանակ հանգեցրել էր սպանդի, փոխակերպվում էր ստրկության և տնտեսական շահագործման [1]: Կարելի է առանձնացնել առարկայական փոխկապակցված չորս ոլորտներ, որոնց ուսումնասիրմամբ զբաղվում է ռազմական սոցիոլոգիան՝ **ռազմական կազմակեր-**

պություններ, ռազմական համակարգ, զինվորաքաղաքացիական հարաբերություններ և պատերազմի սոցիոլոգիա [1]: Այս ոլորտները բացահայտում են ռազմականության բաղկացուցիչ հիմնական տարրերը:

Ռազմական կազմակերպությունների բնութագրիչները վերհանելու համար գիտնականները հենվում են գոյություն ունեցող երկու մոտեցումներից մեկի վրա՝ ռազմական ուժերը դիտարկելով որպես «գերագույն ուժեր»:

Ռազմականության բնորոշ ասպեկտներ կարելի է բացահայտել մի քանի մոտեցման շնորհիվ: **Մշակութաբանական մոտեցման** մերկայացուցիչներ Ֆիլիպ Սմիթը, Ջոն Հուչինսոնը, Էնթոնի Սմիթը և այլք կենտրոնանում էին խորհրդանիշների, ծեսերի, հավաքական հիշողության դերի վրա՝ որպես պատերազմական փորձի կարևոր բաղկացուցիչներ: Է. Սմիթը և Հուչինսոնը կարևորում են հիշարժան իրադարձությունների և հուշահամալրիների դերը (օրինակ՝ ռազմական շքերթներ, հուշակոթողներ, պատերազմի հերոսների քանդակներ և հիշարժան օրերի նշում) [2]: **Սոցիալ-կենսաբանական մոտեցման** գլխավոր փաստարկն այն է, որ մարդիկ հիմնականում կռվում են միմյանց դեմ սահմանափակ ռեսուրսների, տարածքի և նյութական այլ արտեֆակտների համար: Պատերազմը միայն մշակութային եզրագիծ չունի. այն առաջին հերթին նյութական կորուստների և ոչնչացման մասին է [3]: **Տնտեսագիտական մոտեցումը** նշում է, որ մարդիկ հետաքրքրվում և առաջնորդվում են սեփական շահերով, իսկ բոլոր քայլերի հիմքում ռացիոնալությունն է (նվազագույն ծախսերով առավելագույն շահեր) [3]: **Կազմակերպական-մատերիալիզմի մոտեցման** ներկայացուցիչներից Մանը հակամարտությունը սահմանում է որպես պետության կառուցման որոշիչ սոցիալական մեխանիզմ: Նա պետության և պատերազմի միջև պատմական փոփոխությունները բացատրում էր օգտագործելով սոցիալական ուժի՝ որոշակիորեն անկախ չորս, բայց փոխհարաբերակցության մեջ գտնվող աղբյուրներ՝ քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական և ռազմական [4]:

Պետք է նշել, որ զինվորական ուժերը բնույթով արդյունավետ չեն, երբ զրկվում են աջակցությունից: Ռազմական համակարգը կախված է ոչ ռազմական համակարգի, մարդկային և այլ ռեսուրսների ապահովման և այլ աջակցության հետ, որոնք բաշխվում են երկու համակարգերի միջև: Այսպիսով կարելի է դիտարկել մեկ այլ, ավելի խոշոր համակարգ, որում գործառնում են զինված ուժերը: Սոցիոլոգիական այսպիսի հեռանկարը ուշադրություն է գրավում բանակում աշխատուժի ձեռքբերման աղբյուրների, շերտավորման և կարիերայի շարժունության, զինվորական և քաղաքացիական անձնակազմի միջև գործառույթների բաշխման և հասարակության վրա այդ միջոցների ազդեցությունը տեսանկյունից: Ֆելդը նշում էր, որ ռազմական համակարգը հիմնվում է գերիշխանության վրա, եթե բացակայում է ռազմական և քաղաքացիական համակարգերի միասնականության որևէ հիմք:

Այս համատեքստում 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Երևանի պետական համալսարանի պատերին հայտնվեցին զոհված ազատամարտիկների պատկերներով գրաֆիտիներ: Սա յուրահատուկ երևույթ էր, քանի որ եր-

բեմնի վանդալիզմ համարվող գործողությունը՝ գրաֆիտի պատկերումը [5], հայտնվեց համալսարանի պատերին և գոյություն ունի ցայժմ: Գրաֆիտիները, ինչպես յուրաքանչյուր նմանատիպ տեքստ, որևէ դիսկուրսիվ թեմա են՝ կոդավորված նշանային համակարգով ներկայացված պատկերողի կողմից: Դրանք գաղափարախուսված են և արդի ժամանակաշրջանում, քանի որ հասարակական կյանքում զանգվածային հաղորդակցության բազմապիսի ձևերով հիմնվում են վիզուալ հաղորդակցության վրա: Ընդ որում, տրամադրված տեղեկատվությունը կարող է ներկայացվել խորհրդանշական որոշ կապերով, որոնք ստեղծում են նարատիվ կառուցվածքներ՝ սոցիալական կոնկրետ տարածության մեջ արտահայտելով տվյալ ժամանակաշրջանը:

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքման աղբյուրները ԵՊՀ-ի պատերին 2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո պատկերված զոհված ազատամարտիկների գրաֆիտիներն են: Հետազոտության համար իրականացվել է համատարած ընտրանք: ԵՊՀ տարածքում պատկերված է նմանատիպ ընդամենը 3 գրաֆիտի: Բոլորն էլ վերլուծվել են: Որպեսզի վեր հանենք պատկերված գրաֆիտիներում ռազմականության արտահայտման առանձնահատկությունները, նպատակահարմար է կատարել նարատիվ սեմիոտիկ վերլուծություն: Սեմիոտիկական վերլուծության ֆորմալ մոդել է, որն առաջնորդվում է սոցիալական համակարգում կառավարող և որոշակի իմաստներ փոխանցող նշանների բացահայտման կանոններով:

Նարատիվը կարելի է հասականալ որպես սկիզբ, միջնամաս և ավարտ ունեցող պատմություն, որը կրում է պատմողի փորձը: Գրեյմասն առանձնացրել է նարատիվի հետևյալ էլեմենտները (ակտանտները)՝ սուբյեկտ և օբյեկտ, դեստինատոր (ուղարկող) և ստացող, և ուժերի շարք, որոնք կա՛մ օգնում են, կա՛մ խոչընդոտում (օգնող կամ խոչընդոտող ակտանտներ) [5]: Պատումը զարգանում է դեպի որոշումը՝ սուբյեկտի և այլ նարատիվ ուժերի միջև ձևավորված, զարգացած հարաբերությունների միջոցով: Այս հարաբերությունները տարբերակվում են այն հիմքի վրա, որը սեմիոտիկայում կոչվում է **տոնայնություն և մոդալություն**: Սրանք նարատիվ բաղադրատարրեր են, որոնք բնութագրում են նարատիվ ուժերի հարաբերությունները: Նարատիվի տոնայնությունը ներկայացնում է երևույթի դրական կամ բացասական ուղղվածությունը (նույնն է թե օգնող և խոչընդոտող հանգամանքները), իսկ մոդալությունը՝ երևույթ մասին սուբյեկտի դատողությունները և կարող է լինել **պրագմատիկ կամ կոգնիտիվ**: Պրագմատիկ մոդը հաստատում է սուբյեկտի իշխանական կապը կամ գործելու կարողությունը: Սուբյեկտի և նարատիվ այլ ուժերի պրագմատիկ հարաբերությունները զարգանում են գործողությունների միջոցով՝ պատմության հաջորդականությամբ: Կոգնիտիվ մոդը հաստատում է սուբյեկտի գիտելիքային կապը կամ տիրապետած գիտելիքը: Կոգնիտիվ հարաբերությունները ծավալվում են գործողությունների հաջարդականությունից դուրս [6]: Սա մեզ թույլ է տալիս վեր հանել գրաֆիտիների նարատիվ և խորին կառուցվածքները՝ դիտարկելով որպես տեքստի յուրա-

հատուկ դրսևորում, որի միջոցով հնարավոր է խորությամբ ուսումնասիրել դրանց գաղափարական-մշակութային բաղադրիչները և ներկայացնել հարաբերակցության սխեման:

Գրաֆիտիների վերլուծությունն իրականացվել է հետևյալ կերպ. Նարատիվները կառուցելու համար նախ սահմանվել է նարատիվ բլոկը, որն այս հետազոտության մեջ մեկն է՝ հիմնված տեղի և ժամանակի իզոտոպների վրա: Այս բլոկը բաժանվում է երեք ենթաբլոկների: Յուրաքանչյուրը պարունակում է մեկական գրաֆիտի: Այնուհետև դուրս է բերվել ակտանտային կառուցվածքը, մոդալությունները և տոնայնությունը, ինչից հետո փորձ է կատարվել երեք ենթաբլոկներից ստեղծել ընդհանուր մեկ նարատիվ:

Ենթաբլոկ 1. Ռոբերտ Աբաջյանի պատկերը. ԵՊՀ գլխավոր մասնաշենքից ձախ գտնվող անցման պատ (հավելվածներ 1.1, 2):

«Նա մինչև վերջին պահը դիրքը չլքեց: Մի՛ լքիր հայրենիքը...»:

Այս գրաֆիտիում ցույց է տրվում, որ դիրքը չլքելը արտաքին սահմանների, իսկ հայրենիքը չլքելը՝ ներքին սահմանների պաշտպանությունն է: Բացի այդ, գրաֆիտին փորձում է սեփականության զգացողություն առաջացնել ընթերցողի մոտ: Դա կատարվում է «հայրենիքը» բառում ստացական «դ» հոդի շնորհիվ: Հիմնական շեշտադրումն այն է, որ տվյալ երկիրը քոնն է: Գրաֆիտիի հիմնական գաղափարը հայրենիքի հանդեպ որոշակի պարտավորվածությունների մատնանշումն է, այն է՝ յուրաքանչյուր ոք, լինելով տվյալ պետության ներկայացուցիչ, պարտավորություններ ունի և պետք է կատարի: Հետևաբար, այստեղ մեր նարատիվի օբյեկտ է համարվում «անձի որոշակի պարտավորվածությունը հայրենիքի նկատմամբ»: Այժմ դուրս բերենք ակտանտների համակարգը.

Ուղարկողը (դեստինատորը)՝ հայրենասիրություն, քանի որ գրաֆիտին ուղղված է հայրենասիրական գաղափարների տարածմանը (պարտավորվածություն և պատասխանատվություն հայրենիքի հանդեպ): **Ստացող՝ երիտասարդություն, մասնավորապես՝ ուսանող երիտասարդություն,** քանի որ ժամանակի և տարածության իզոտոպները հանգեցնում են այս շեշտադրմանը: **Սուբյեկտ՝ համալսարան:** Առաջին հայացքից կարող է թվալ, թե սուբյեկտը զինվորն է: Սակայն իրականում զինվորը ոչ թե համարվում է այս նարատիվի սուբյեկտ, այլ օգնող գործոն: Այս գրաֆիտին համարվում է հեղինակի՝ ԵՊՀ ՈՒԽ-ի աջակցությամբ և համագործակցությամբ իրականացված ծրագիր: Ընդ որում, այստեղ հեղինակը չի համարվում սուբյեկտ այն պարզ պատճառով, որ նրա նախաձեռնությունը միայն հերոսներին որպես «հուշարձան» պատկերելն է եղել: Ինչ վերաբերում է գրաֆիտիի հիմնական ուղերձին, ապա այն մշակվել է համալսարանը ներկայացնող ուսանողական աշխատակազմի միջոցով: **Օբյեկտ՝ պարտավորվածություն հայրենիքի նկատմամբ: Օգնող միջոցներ՝ զինվոր, սահմանը չլքելու, իր պարտականությունը արդեն կատարած լինելու հանգամանք: Խանգարող միջոցներ՝ հայրենիքը լքելու գաղափար [7]:**

Գրաֆիտիում ներկայացվում է երկու դերակատարում՝ քաղաքացի և զինվորական, այն է՝ քաղաքացիություն-զինվորականություն փոխհարաբերություններ: Հասկանանք այս ընդդիմադիր հարաբերությունների մոդալությունը:

Զինվորականի կերպարի արժեքանորմատիվային համակարգը ներառում է անձնվիրություն, քաջություն, պարտաճանաչություն, հայրենասիրություն, հերոսություն, պատասխանատվության զգացողություն: Սա ներկայացնում է **կոզնիտիվ մակարդակը**՝ արտահայտված դրական մոդալությամբ: Զինվորականի կերպարի **պրագմատիկ մակարդակը** համապատասխանում է կոզնիտիվ մակարդակին: Սա ենթադրում է, որ գրաֆիտիում զինվորականության պատկերացումային և գործողությանային համակարգերը համընկնում են:

Քաղաքացու կերպարի արժեքանորմատիվային համակարգը ներառում է անձնվիրություն, քաջություն, պատասխանատվության զգացողություն, հայրենասիրություն, պարտաճանաչություն: Սա ներկայացնում է նրա վերաբերյալ **կոզնիտիվ մակարդակը**: Այսպիսով, այստեղ զինվորականության կոզնիտիվ դրական մոդալություն կա, որը հավասարվում է զինվորականության դերակատարությանը: Իսկ քաղաքացու կերպարի գործողությանային համակարգը ներկայանում է բացասական մոդալությամբ: Այսպիսով, քաղաքացիության պատկերացումային և գործողությանային համակարգերը գրաֆիտիում չեն համընկնում:

Տվյալ ենթաբլոկի սեմիոտիկ քառակուսու կառուցվածքը. Այս գրաֆիտիի մեջ արտահայտված զինվորականություն-քաղաքացիություն հարաբերություններից որևէ մեկը չի գերակայում: Զինվորականության ներկայացման համար օգտագործվում են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ մահ, պատերազմ, պայքար, ռազմական գործողություն, արտաքին պաշտպանություն, քաղաքացիության ներկայացման համար օգտագործվում են խաղաղության, հաշտության, քաղաքացիական գործողության և ներքին պաշտպանության ցուցանիշները:

Ենթաբլոկ 2. Արմենակ Ուրֆանյանի պատկերը. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք (հավելվածներ 1.2, 2):

«Նրա առաքելությունն էր պաշտպանել: Քո առաքելությունն է՝ սովորել...»:

Այստեղ ցուցադրվում է, որ և՛ քաղաքացին, և՛ զինվորը ունեն առաքելություն, այսինքն՝ խոսքը կրկին հայրենիքի նկատմամբ պարտավորության մասին է: Սակայն այս գրաֆիտին տարբերվում է նրանով, որ շեշտում է, թե որն է պարտավորվածությունը: Զինվորի դեպքում դա պաշտպանելն է, իսկ քաղաքացու դեպքում՝ սովորելը, որը կրում է գիտելիքի ձեռքբերման ընթացակարգի գաղափարը: Այստեղ «սովորելը» դիտարկվում է «պաշտպանելու» հետ համատեքստային այնպիսի հարաբերությունների մեջ, որի շնորհիվ «սովորելը» դառնում է «պաշտպանության» դրսևորում: Այսպիսով, գրաֆիտին շեշտադրում է, որ զինվորը՝ որպես տվյալ դերի կրող, պարտավորություն ունի արտաքին, իսկ քաղաքացին՝ ներքին պաշտպանության համար: Քանի որ արդեն պարզեցինք, որ գրաֆիտիի համար գլխավոր ստացող (լսարան) համարվում է երիտասարդությունը, իսկ ուղարկողը համալսարանն է, ապա բնական

է, որ ներքին պաշտպանությունը սովորելու միջոցով շարժվում է պարտավորվածության կատարման ուղղությամբ: Բավականին հետաքրքիր է արտահայտվում մահվան և կյանքի գաղափարի օժանդակ բայերի միջոցով՝ «առաքելությունն էր», «առաքելությունն է»: Դրանով տեքստն կոչ է անում սովորել («կյանքի» ցուցիչ) և պաշտպանել («մահվան» ցուցիչ):

Այս գրաֆիտիների համատեքստում արտաքին պաշտպանությունը և հերոսությունն ուղղակիորեն կապվում են մահվան հետ. հերոսները մահացած հերոսներ են, իսկ պաշտպանները նույնականացվում է մահվանը: Միաժամանակ գրաֆիտին փորձում է կոտրել այս գաղափարը՝ ցույց տալով, որ հերոս լինելու համար պարտադիր չէ զոհվել: Դու կարող ես սովորել և լինել պաշտպան, հերոս՝ ներքին սահմաններում:

Գրաֆիտիի ակտանտների համակարգում փոխվում են երեք դերակատարներ (ակտորներ)՝ օբյեկտ՝ հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի բնույթը, օգնող միջոցներ՝ զինվոր, կատարված պաշտպանական առաքելություն, խանգարող միջոցներ՝ սովորելու ցանկության բացակայություն:

Այս գրաֆիտիում, ինչպես նախորդում, արտահայտվում են զինվորականության պրագմատիկ և կոգնիտիվ մակարդակներ՝ դրական մոդալությամբ, և քաղաքացիության կոգնիտիվ դրական և պրագմատիկ բացասական մոդալությամբ մակարդակներ:

Տվյալ ենթաբլոկի սեմիոտիկ քառակուսու կառուցվածքը. Այս գրաֆիտիի մեջ արտահայտված զինվորականություն-քաղաքացիություն հարաբերություններից որևէ մեկը չի գերակայում: Զինվորականությանը ներկայացնելու համար օգտագործվում են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ մահը, պատերազմը, պայքարը, ռազմագործողությունը, արտաքին պաշտպանությունը, քաղաքացիության ներկայացնելու համար՝ կյանքը, խաղաղությունը, հաշտությունը, քաղաքացիական գործողությունը և ներքին պաշտպանության ցուցանիշները:

Ենթաբլոկ 3. Բենիամին Եղոյանի պատկերը. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մասնաշենքի պատին (հավելվածներ 1.3, 2):

«Նա զենքը տանկն էր, քո զենքը գիտելիքն է...»:

Այս գրաֆիտիի հիմնական իմաստը գիտելիքի և տանկի կիրառական նշանակությունն է, իսկ ընդդիմությունը ստեղծվում է այն ժամանակ, երբ փորձում ենք պայքարի մեջ դիտարկել հարաբերությունները: Երբ տանկը և գիտելիքը դիտվում են որպես պայքարի միջոց, ապա զինվորը ուրիշ հնար չունի պայքարելու, բացի իրեղեն զենքից՝ սպառազինությունից: Իսկ քաղաքացին գիտելիքով պետք է պայքարի, որ ապահովի ներքին պաշտպանությունը: Տանկն արտաքին պաշտպանության և պարտավորությունների, իսկ գիտելիքը՝ ներքին պաշտպանության խորհրդանիշն է: Հիմնական ուղերձը հետևյալն է. եթե զինվորը պաշտպանում է զենքով, ապա դու էլ ունես քո պարտականությունը՝ ունենալու գիտելիք, որով նույնպես կարող ես օգտակար լինել հայրենիքիդ: Այսինքն կրկին արժաձվում է որպես զինվոր ու քաղաքացի

հայրենիքին ծառայելու գաղափարը: Եթե զինվորականի օրինակելի կերպարը պետք է տանկն օգտագործի որպես զենք, ապա քաղաքացու օրինակելի կերպարը՝ գիտելիքը: Այսպիսով, գրաֆիտիի հիմնական գաղափարն է շեշտել, որ հայրենիքի հանդեպ պարտավորություն ունի մեզնից յուրաքանչյուրը. եթե զինվորի միջոցը սպառազինությունն է, ապա քաղաքացու միջոցը գիտելիքն է: Գրաֆիտիի ակտանտների համակարգում փոխվում են երեք դերակատարներ. օբյեկտ՝ պարտավորության կատարման միջոց, օգնող միջոցներ՝ զինվոր, սպառազինություն, խանգարող միջոցներ՝ գիտելիքի բացակայություն:

Այս գրաֆիտիում, ինչպես նախորդում երկուսում ևս, արտահայտվում են զինվորականության պրագմատիկ և կոզնիտիվ մակարդակներ՝ դրական մոդալությամբ, և քաղաքացիության կոզնիտիվ դրական և պրագմատիկ բացասական մոդալությամբ մակարդակներ:

Տվյալ ենթաբլոկի սեմիոտիկ քառակուսու կառուցվածքը. Այս գրաֆիտիում զինվորականություն-քաղաքացիություն հարաբերության մեջ գերակայում է զինվորականությունը: Ջինվորականության ներկայացման համար օգտագործվում են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ մահը, պատերազմը, պայքարը, սպառազինությունը, արտաքին պաշտպանությունը, իսկ քաղաքացիության ներկայացման համար՝ խաղաղությունը, հաշտությունը, քաղաքացիական ատրիբուտը և ներքին պաշտպանության ցուցանիշները:

Իրականում այս երեք գրաֆիտիները ոչ թե ներկայացնում են երեք առանձին նարատիվներ, այլ մեկ գաղափարի, մեկ տեքստի և մեկ նարատիվի մաս են կազմում: Այստեղ կա մեկ պատմույթ-ուղերձ, որը բաժանվել է 3 մասի և ներկայացել տարածական նույն հարթության տարբեր կետերում: Ռ. Աբաջյանը պատմույթի սկիզբն է, Ա. Ուրֆանյանը՝ միջնամասը, իսկ Բ. Եղոյանն՝ ավարտը: Այս գրաֆիտիների միջոցով արծարծվում է 3 մակարդակ՝ գաղափարախոսական (պարտականություն), գործողության (պաշտպանելու առաքելություն) և գործիքային (զենք): Սրանք համապատասխանաբար հավասարազոր են նարատիվ կառուցվածքի գիտելիքային, մտադրվածության և իշխանության կապերին: Աբաջյանի գրաֆիտին ներկայացնում է գիտելիքային կապը, գաղափարախոսական մակարդակի ցուցիչը, շեշտադրում է հայրենիքի նկատմամբ յուրաքանչյուրի պարտավորության գաղափարախոսությունը՝ դառնալով ընդհանուր նարատիվի շարժիչ ուժ: Ուրֆանյանի գրաֆիտին ներկայացնում է մտադրվածության կապը, գործողության մակարդակի ցուցիչը, որի գաղափարախոսությունը մետամակարդակից իջեցնում է կոնկրետ գործողության մակարդակ՝ ցույց տալով դրա դրսևորումը՝ պաշտպանությունը: Եղոյանի գրաֆիտին ներկայացնում է իշխանության կապը: Այն գործիքային մակարդակի ցուցիչ է, որը պետք է հնարավորություն ընձեռի գործողության մակարդակի իրականացմանը, կամ խոչընդոտի դրան: Սրա միջոցով ցուցադրվում է ամեն դերակատարի պարտականությունը՝ պաշտպանությունն իրականացնելու օրինակելի միջոցը: Բացի այդ, նարատիվում զինվորականությունը և՛ պրագմատիկ, և՛ կոզնիտիվ մակարդակում դրսևորվում է

դրական մոդալությամբ, իսկ քաղաքացիությունը՝ կոգնիտիվ մակարդակում՝ դրական, իսկ պրագմատիկ մակարդակում՝ բացասական մոդալությամբ: Սա նշանակում է, որ քաղաքացիության վերաբերյալ վարքային օրինակելի մոդելներ կան, որոնց չեն համապատասխանում քաղաքացիների գործողությունները, մինչդեռ զինվորականությունը ներկայանում է սպասումների համապատասխանությամբ: Սրա միջոցով գրաֆիտին փորձում է ուղղորդել քաղաքացիներին սպասելի վարք դրսևորելու համար: Այսպիսով, կարելի է դուրս բերել ընդհանուր նարատիվը.

Ապրիլյան քառօրյա պատերազմի ավարտից հետո ԵՊՀ ՈՒԽ-ի աջակցությամբ և հեղինակի նախաձեռնությամբ ստեղծված այս երեք գրաֆիտիներն ուղղորդվում են երիտասարդների շրջանում հայրենասիրական գաղափարախոսության տարածմանը: Նարատիվը, որը կառուցվում է այս գրաֆիտիների միջոցով, նշում է, որ յուրաքանչյուր անձ պարտավորություն ունի հայրենիքի նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, որ փոխվում են՝ կախված անձի դերից (քաղաքացի կամ զինվոր): Հորդորելով քաղաքացուն չլքել հայրենիքը՝ նարատիվը ցույց է տալիս, որ այս գործողությունն օրինակելի չէ և հավասար է դավաճանության: Պետք է կատարել հայրենիքի նկատմամբ պարտավորությունները, բայց քանի որ դերակատարումները տարբեր են, տարբեր են նաև պարտականությունները, ուստի պետք է հստակեցնել յուրաքանչյուր դերին վերագրվող պարտավորությունը: Նարատիվն այս փուլում շեշտադրում է կատարում պաշտպանության վրա՝ նշելով, որ զինվորը պատասխանատու է արտաքին, իսկ քաղաքացին՝ ներքին պաշտպանության համար: Ներքին պաշտպանության իրականացումը նույնականացվում է սովորելու հետ: Այնուհետև նարատիվը կենտրոնանում է պարտավորության կատարման բուն մեխանիզմների օգտագործման վրա: Զինվորի դեպքում դա սպառազինությունն է (արտահայտչականության համար օգտագործվել է տանկը), իսկ քաղաքացու համար՝ գիտելիքը: Գիտելիքի միջոցով քաղաքացին, մասնավորապես՝ երիտասարդը, պետք է կարողանա պաշտպանել հայրենիքի ներքին սահմանները: Յուրաքանչյուր գրաֆիտիում խոսքից ու պատկերից զատ ներկայացվում է հերոսի անունը, ինչը կատարում է հիշողության մեջ տվյալ մարդու և իրադարձության ամրապնդման ու հավաքական հիշողության ձևավորման գործառույթ: Տեքստի մակերեսային կառուցվածքում սա ուղղված է զինվորների վառ հիշատակի պահպանմանը, սակայն խորքային մակարդակում պետք է նպաստի նաև ներքին համախմբությանը:

Այս նարատիվը ցույց է տալիս, որ հայրենիքի հերոս լինելու համար իրականում պարտադիր չէ զոհվել: Քաղաքացին նույնպես կարող է իր պարտքը կատարել. կենդանության օրոք սովորել, գիտելիք ձեռք բերել՝ այս կերպ ծառայելով հայրենիքին:

Հետաքրքիր է, որ նարատիվի բոլոր մակարդակներում քաղաքացիության և զինվորականության հավասար հարաբերություններ են արտահայտվում: Այսինքն՝ զինվորականությունը ներկայացվում է որպես դեր, որը պարտաճանաչորեն կատարվում է՝ ի տարբերություն քաղաքացիության դերի: Սակայն այս երկու դերակատարումները ցուցադրվում են հավասարության մեջ՝ շեշտադրելով, որ երկու դերակատար-

րումները հավասարապես կարևոր են հայրենիքի համար: Սա բարձրացնում է քաղաքացիության կարևորությունը և նպաստում քաղաքացու պատասխանատվության բարձրացմանը: Նպատակը մեկն է՝ քաղաքացիությանը ևս հաղորդել զինվորականությանը հատուկ պաշաճ դերակատարում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Lang K.**, Military sociology, State University of New York at Stony Brook, 1965, p. 1, 6.
- [2] **Hutchinson J.**, 'Warfare, remembrance and national identity. In: A. Leoussi and S. Grosby (eds). Nationalism and Ethnosymbolism: History, Culture and Ethnicity in the Formation of Nations', Edinburgh: Edinburgh University Press, 2007, pp. 42-54.
- [3] **Malesevic S.**, 'Sociological Theory and Warfare', 2011, pp. 10-2, 13-4, URL: https://www.researchgate.net/publication/272678504_Sociological_Theory_and_Warfare (Accessed: 11.05.2018).
- [4] **Mann M.**, 'The Sources of Social Power I: A History of Power from the Beginning to A.D. 1760'. Cambridge: Cambridge University Press, 1986, pp. 112-4.
- [5] **Snyder G.**, 'Graffiti Lives: Beyond the Tag in New York's Urban Underground', NYU Press, 2009, pp. 3-4, 250-60.
- [6] **Тичер С., Мейер М., Водак Р., Веттер Е.**, «Методы анализа текста и дискурса», Гуманитарный центр Харьков, 2009, сс. 172-5.
- [7] **Греймас А. Ж.**, «Структурная семиотика: Поиск Метода», Академический проект Москва, 2004, с. 129.

Միջիկյան Սրբուհի

**ՈԱԶՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ԳՐԱՖԻՏԻՆԵՐՈՒՄ
Բանալի բառեր՝ գրաֆիտի, ռազմականության սոցիոլոգիա, զինվորականություն-
քաղաքացիություն հարաբերություններ, նարատիվ սեմիոտիկա:**

2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Երևանի պետական համալսարանի պատերին հայտնվեցին զոհված ազատամարտիկների պատկերներով գրաֆիտիներ: Սա բավականին յուրահատուկ երևույթ է, քանի որ համալսարանի պատերին պատկերված գրաֆիտիները գոյություն ունեն մինչ այժմ: Տվյալ հոդվածում ներկայացված է 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Երևանի պետական համալսարանի պատերին պատկերված զոհված ազատամարտիկների գրաֆիտիների նարատիվ սեմիոտիկ վերլուծությունը: Հետազոտության նպատակն է վեր հանել տվյալ գրաֆիտիների ռազմականության դրսևորումները: Գրաֆիտիները դիտարկվել են որպես առանձին երեք նարատիվ բլոկներ:

Արդյունքում պարզվել է, որ դրանք ընդհանուր նարատիվի ենթաբլոկ են: Դուրս են բերվել գրաֆիտիների պատմության խորին մակարդակները, ինչի արդյունքում նկատվել է քաղաքացիության և ռազմականության համահարթեցում:

Мичикян Србуи

ПРОЯВЛЕНИЕ ВОЕННОГО ХАРАКТЕРА В ГРАФФИТИ, ИЗОБРАЖАЮЩИХ ВОЕННОСЛУЖАЩИХ, ПОГИБШИХ ВО ВРЕМЯ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ

Ключевые слова: граффити, социология милитаризма, военно-гражданские взаимоотношения, нарративная семиотика.

После четырехдневной войны в апреле 2016 года на стенах Ереванского государственного университета появились граффити с изображениями погибших военнослужащих. Это довольно своеобразное явление, так как эти граффити, появившиеся на стенах университета, всё ещё существуют. В данной статье представлен нарративно-семиотический анализ граффити, изображающих борцов, погибших за свободу, и изображенных на стенах Ереванского государственного университета. Целью исследования является выявление проявлений военного характера на граффити. Граффити рассматривались как три отдельных нарративных блока, но исследование показало, что они представляют собой подгруппы одного нарратива. На более глубоких нарративных уровнях гражданство и военный характер находятся на одном уровне.

Michikyan Srбуhi

MANIFESTATION OF MILITARY CHARACTER IN GRAFFITI, PICTURING MILITARY SERVANTS PERISHED DURING FOUR-DAY APRIL WAR

Key words: graffiti, military sociology, military-citizenship relationship, narrative semiotics.

After the Four-day War in April 2016, graffiti with images of perished fighters for freedom appeared on the walls of Yerevan State University. This is a rather specific phenomenon, as the graffiti still exists. The article presents a semiotic analysis of the graffiti of the the military servants depicted on the walls of Yerevan State University after the Four-Day War in April 2016. The purpose of the research is to reveal the manifestations of military character in the graffiti. The latter has been is viewed as three separate narrative blocks. However, graffiti has turned out to be a sub-group of one narrative. At deeper narrative levels, citizenship and military character are on the same level.